

Հ Ր Ա Մ Ա Ն N 977-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

«11» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքով և հիմք ընդունելով Հայաստանի
Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ
հաստատված կարգի 7-րդ և 20-րդ կետերը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Պրոբացիայի ծառայության 2020 թվականի կարիքների համար իրականացվող բոլոր
պետական գնումների կազմակերպման նպատակով՝ բացառությամբ այն դեպքերի, որոնց
համար այլ իրավական ակտով կսահմանվեն այլ պատասխանատու ստորաբաժանում և/կամ
գնումների համակարգող, սահմանել.

- 1) պատասխանատու ստորաբաժանում՝ Արդարադատության նախարարության
գործերի կառավարչության նյութատեխնիկական ապահովման և սպասարկման
բաժին և Արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության
նյութատեխնիկական ապահովման բաժնի պետ,
- 2) պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Արդարադատության
նախարարության գործերի կառավարչության նյութատեխնիկական ապահովման և
սպասարկման բաժնի պետ,
- 3) գնումների համակարգող՝ Արդարադատության նախարարության գործերի
կառավարչության գնումների կազմակերպման բաժին:

Ժամանակավոր պաշտոնակատար՝



ՆԱՐԵԿ ՂԱԶԱՐՅԱՆ